ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 11.02.2020Թ. ԹԻՎ 4/1-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի և Մարինե Ֆարմանյանի,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 11-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 12-րդ ենթակետի պահանջներով,

միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 11.02.2020թ. թիվ 4/1-Լ որոշմամբ հաստատված «Այլ պետության փաստաբանի հավատարմագրման կարգ»-ի 22-րդ կետի բ) ենթակետը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ ***«մինչև 2023 թվականի հոկտեմբերի 10-ն առնվազն հինգ տարի մշտապես բնակվել է Արցախում, կամ»:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ **Սիմոն Բաբայան**

19 փետրվարի 2024թ.
թիվ 3/12-Լ
ք. Երևան